Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
սեպտեմբերի 11-ի N 1304 - Ն որոշման

ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հ/Հ	Հատուկ միջոցի	
	տեսակը	**տեխնիկական բնութագիրը**
1.	2.	3.
1.	Ձեռնաշղթաներ	Մետաղյա, սևեռիչով, քաշը ոչ ավելի, քան 1,6 կիլոգրամ, կիրառման թույլատրելի առավելագույն առաձգական ուժը՝ 2500 նյուտոն: Մեկանգամյա օգտագործման, տեքստիլից և պլաստիկից, քաշը՝ ոչ ավելի, քան 0,5 կիլոգրամ:
2.	Կապող ցանցեր	Ցանցի տրամագիծը բացված վիճակում ոչ պակաս, քան 3 և ոչ ավելի, քան 7 մետր, նետման հեռավորությունը՝ ոչ պակաս, քան 5 մետրը, բջիջների չափսը՝ ոչ ավելի, քան 10x10 սանտիմետր, մանրաթելից կամ նեյլոնից, քաշը՝ ոչ ավելի, քան 10 կիլոգրամ:
3.	Մահակներ	Ռետինից, մետաղից տելեսկոպիկ և ֆիքսված, ուղիղ և Տ-աձև, երկարությունը՝ ոչ ավելի, քան 0,8 մետր, քաշը՝ ոչ ավելի, քան 0,9 կիլոգրամ, տրամաչափը՝ ոչ ավելի, քան 3,5 սանտիմետր:
4.	Ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակներ, կրակոցներ և արկեր	Լույսի ուժը՝ ոչ ավելի, քան 70 միլիոն կանդելա: Կարճաժամկետ պայծառ ճառագայթման տևողությունը՝ ոչ ավելի, քան 0,05 վայրկյան: Ձայնային ճնշման մակարդակը՝ ոչ ավելի, քան 180 դեցիբել՝ 1,5 մետր հեռավորության վրա: Բազմատարրի տարրերի քանակը՝ ոչ ավելի, քան 7 հատ:

1.	2.	3.
5.	Ձեռքի ծխանոնակներ, ծխագլանակներ, ծխային կրակոցներ և արկեր	Ծխածածկույթի երկարությունը՝ ոչ պակաս, քան 10 մետր, բարձրությունը՝ ոչ պակաս, քան 3 մետր, գոյատևման ժամանակը՝ ոչ պակաս, քան 30 վայրկյան: Ոչ բեկորային, ոչ պայթյունավտանգ, թունավոր և գրգռիչ նյութեր չպարունակող:
6.	Էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ	Անմիջական և հեռահար ազդեցության, ազդեցության հզորությունը 1 000 Օհմ դիմադրության դեպքում՝ ոչ ավելի, քան 10 Վատտ, իսկ կայծի լիցքաթափման լարումը՝ ոչ ավելի, քան 120 000 Վատտ, ազդեցության տևողությունը՝ ոչ ավելի, քան 3 վայրկյան:
7.	Արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի սրվակներ, նռնակներ, կրակոցներ և արկեր	Լիցքավորված արցունքաբեր, գրգռիչ գազով, գազարձակվող, օժտված չէ անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու ունակությամբ: Ակտիվ գազարձակման տևողությունը՝ ոչ ավելի, քան 20 վայրկյան:
8.	Ծառայողական շներ (պահնորդական, հետախուզական, պարեկային)	Ոչ պակաս, քան 6 ամսական, տարբեր վարժեցումների ընդունակ ցեղատեսակի, որոնք իրենց ցեղատեսակի համար ունեն միջին զարգացվածության լսողություն, տեսողություն, հոտառություն, մկանային համակարգ և հավասարակշռված նյարդային համակարգ:
9.	Արգելքներ քանդող գործիքներ (սարքեր) և տեխնիկա	Փոքր չափի պայթուցիկ նյութեր, պատ քանդելու հարմարանքով կահավորված տեխնիկա, դուռ կամ փական կոտրելու հարվածային և այլ գործիքներ, մեխանիկական և ձեռքի մետաղահատիչներ:
10.	Մարդկանց և տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու (արգելափակելու) տեխնիկական պատնեշներ, ճանապարհային ոզնիներ և փշալարեր	Բազմաֆունկցիոնալ բացվող և փակվող զրահապատ վահանով կահավորված հատուկ մեքենա, որի վահանը բացված վիճակում վերածվում է ոչ պակաս, քան 7 մետր լայնության և ոչ պակաս, քան 3 մետր բարձրության պատի: Մետաղյա 5-10 սանտիմետր փշերով, ոչ պակաս, քան 5 մետր երկարությամբ բացվող ժապավեն, որի փշերի միջև հեռավորությունը բացված վիճակում ոչ ավելի է, քան 15 սանտիմետրը: Ցինկապատ փշերով փափուկ մետաղյա լար կամ ժապավեն, որի փշերի երկարությունը ոչ ավելի է, քան 6 սանտիմետրը, իսկ տրամագիծը՝ ոչ ավելի, քան 6 միլիմետրը:

1.	2.	3.
11.	Ջրանետեր	Ջրի նետման հեռավորությունը՝ ոչ ավելի, քան 100 մետր, ջրի հոսքի արագությունը՝ ոչ ավելի, քան 50 լիտր 1 վայրկյանում, ջրի ճնշումը՝ ոչ ավելի, քան 18 մեգապասկալ:
12.	Ջրահամեքենաներ	Անվավոր, զրահապատ, հակաբեկորային և հակա-փամփուշտային պաշտպանվածություն ունեցող, առավելագույն արագությունը՝ ոչ պակաս, քան 60 կիլոմետր/ժամ, փոխադրում է ոչ պակաս, քան 6 մարդ և ոչ պակաս, քան 1000 կիլոգրամ բեռ, ունի ոչ պակաս, քան 3 դուռ:
13.	Ռետինե գնդակներով փամփուշտներ	Կլոր կամ բութ ծայրով, ռետինե, առանց կարծր միջուկի, դեֆորմացման ենթակա և նվազագույն անդրադարձող թռիչք ունեցող:
14.	Նույնականացնող կամ տարբերակող ներկող նյութեր	Գունավոր քիմիական նյութ կամ լուծույթ, որը հագուստի, մարմնի կամ այլ առարկաների վրա մնում է երկար ժամանակ և չի գունաթափվում լվանալու արդյունքում, մարդկանց առողջությանը վնաս չի պատճառում: Անգույն քիմիական նյութ կամ լուծույթ, որը տեսանելի է միայն ուլտրամանուշակագույն ճառագայթների տակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ